Տեղեկատվական նյութ, բարձրաստիճան պաշտոնյաների համար, համայնքի բնակիչների իրավունքների վերաբերյալ, թե ինչպես կարող են ներգրավվել որոշումների կայացման գործում

Հանրությունը կամ համայնքը՝ մարդկության զարգացման պատմության ընթացքում ամենահին սոցիալական ինստիտուտներից մեկն է: Ինչպես նշել է Ռենե Դյուբոն. «Ավելի քան 100 միլիարդ մարդ ապրում էր Երկրի վրա ուշ Պալեոլիթի ժամանակներից և նրանց ճնշող մեծամասնությունը անցկացրել իրենց կյանքը, ինտեգրված լինելով փոքր խմբում, որտեղ հազվադեպ էր գերազանցում մի քանի հարյուր մարդ: Համայնքային կյանքի անհրաժեշտությունը այնքան երկար է ներկա եղել, որ այն արմատավորվել է մարդկանց գեների մեջ»: Ինչպես պնդում է Դյուբոն ժամանակակից մարդը, դեռ կենսաբանական անհրաժեշտություն ունի լինել մի մասը /մի փոքր/ խմբի:

Սակայն գլոբալիզացիայի և այլ գործընթացների զարգացմանը զուգահեռ, որոնք նպաստում էին համայնքների վայրի տեղափոխումը համայնքների շահերի, ընթացան նաև այլ գործընթացներ, որն իր հերթին, ապահովեց տեղական համայնքների վերածնունդը: Այսպիսով, պետական կառավարման ապակենտրոնացման սկզբունքների տարածման

արդյունքում, ինչպես նաև մասնակցային ժողովրդավարության սկզբունքների գաղափարների և քաղաքացիական հասարակության որոշումների ընդունման գործընթացի ներգրավման անհրաժեշտությունը դարձավ մեկ կառավարչական տարածքային միավորում բնակվող մարդկանց շրջանակներում օբյեկտիվ շահերի ընդհանրության գիտակցումը: Մասնավորապես, տարածքների բարեկարգման, շահերի ընդհանրությունը, ինչպես նաև տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտությունը՝ մարդկանց կյանքի բարձր որակի ապահովման համար:

Համաշխարհային պրակտիկայում տեղական համայնքների գործունեության զարգացումը (community development), մի կողմից, ենթադրում է մարդկանց միավորում, որոնք բնակվում են նույն տարածքում և նրանց մոտ պատկանելիության զգացումի առաջացում, որոնք էլ ունեն միևնույն ընդհանուր շահերը: Մյուս կողմից, տեղական համայնքների գործունեության զարգացումը ենթադրում է տնտեսական ենթակառուցվածքների գործունեության զարգացում (աշխատատեղերի ստեղծում, զարգացում, առողջապահական, կրթական և այլն), որը կնպաստի համապատասխան տարածքներում մարդկանց հարմարավետ ապրելուն: Երկրորդ պնդման իրագործումը, ինչպես նշվում է տեղական համայնքների զարգացման տեսաբանությունը և պրակտիկան, անհնար է առանց առաջինի հաջողության:

Պետական կառավարման պրիզմայով մարդկանց ինքնակազմակերպման ունակության դիտարկումը կարող է սահմանվել որպես հիմք՝ մշակելու պատասխաններ տեղական խնդիրների համար: Տեղական մակարդակով պետական իշխանության ներկայացուցիչների շրջանում ավելի տարածված է այսպես կոչված ինտերակտիվ կառավարումը, որն իրենից ենթադրում է ավելի վաղ փուլերում

բնակիչների ներգրավումը կառավարչական որոշումների ընդունման գործընթացին: Այս համատեքստում տեղական համայնքի զարգացումն իրենից ներկայացնում է

մարդկանց նախաձեռնողական ունակության զարգացում՝ տեղական նշանակության հարցերի լուծման համար խմբակային որոշումներին մասնակցելուն:

Հիմնական խնդիրները, որոնք իրենց առաջ դնում են փորձագետները տեղական համայնքների զարգացման համար հետևյալն են.

- Կիրառել բնակչության ունակությունները /համատեղ դրական գործողությունների/ (capacity building)
- «Օժտել» բնակչությանը՝ իշխանությամբ (community empowerment), բնակիչներին դարձնել ազդեցության սուբյեկտից ⟹ գործողություններ իրականացնող սուբյեկտի:
- Ամրապնդել հարաբերություններում վստահություն, համերաշխություն, համագործակցություն, տեղական համայնքում փոխադարձ հարգանք մարդկանց միջև, ամրապնդել մարդկանց պատրաստակամությունը համագործակցության, բնակիչների մոտ պատկանելիության զգացում, շահերի ընդհանրության գիտակցում, սոցիալական կապիտալի ավելացում, սոցիալական հակազդեցության մեկուսացում:

Այս խնդիրների լուծման համար, անհրաժեշտ է հասկանալ տեղական համայնքների զարգացման մեխանիզմները: Այսինքն, մեխանիզմների ավելացման, սոցիալական կապիտալի ձևավորման, տեղաբնակների մոտ պատկանելիության զգացումի ձևավորման և ընդհանուր շահերի առկայության, ինչպես նաև մարդկանց շահերը և կարողությունները համախմբված պաշտպանել:

Տեղական համայնքների զարգացման մեխանիզմները (միջազգային օրինակ)

Ներկայումս, առավել արդյունավետ և առավելագույն տարածումը ստացած տեղական համայնքների զարգացման գործիք է դարձել մարդկանց համատեղ գործին ներգրավելը, որն ուղղված է բոլոր մասնակիցների համար հանրային բարիքի կամ փոխադարձ շահի հասնելու: Նման գործունեություն կարող է լինել մարդկանց մասնակցությունը զանազան միջոցառումներին, որոնք ուղղված են բնակելի տարածքների բարեկարգմանը (օրինակ, բնապահպանական ակցիաներ): Այդպիսի գործունեություն կարող է լինել նաև մարդկանց ներգրավումը կամավարական գործունեության, որն ուղղված է օրինակ՝ սոցիալապես անպաշտպան խմբերին օգնելը: Ինչպես պարզվեց, տեղական համայնքների ստեղծման և ամրապնդման գործում առավել արդյունավետ է գործում մարդկանց ներգրավումը մշակութային բնույթի միջոցառումներին, ինչպիսիք են, օրինակ՝ տեղական թեմատիկ փառատոնները, համերգները, տոնավաճառները և այլն: Ներկայումս միևնույն տարածքում բնակվող մարդկանց գործունեության համար ևս մեկ կարևոր շրջանակ է համարվում համատեղ կազմակերպությունների առկայությունը, որտեղ մարդիկ կիսում են իրենց շահերը, ունեն ընդհանուր հետաքրքրություններ, գործում է թիմային աշխատանք և կայացվում են փոխադարձ համաձայնեցված որոշումներ:



Նման համատեղ գործունեությունն ունի զարմանալի ունակություն՝ ձևավորել տեղական համայնք: Այն հիմք է ձևավորում մարդկանց միավորման համար, ինչպես

նաև տեղական մակարդակով նրանց կարողությունների ուղղորդմանը համատեղ գործողություն: Այդ հիմքը կազմված է երկու տարրերից՝

1. Ստեղծել և ամրապնդել սոցիալական կապերը մարդկանց, մարդկանց և ՏԻՄ-ի միջև,

2. Ներկայացնել մարդկանց ունակություններն ընդհանուր նպատակների ձևավորման համար և ինքնակազմակերպվվել դրված նպատակներին հասնելու, որոշումներ կայացնելու համար:

Այսպիսով, համատեղ գործունեությունը, որն ուղղված է հասնել հանրային բարիքի կամ փոխադարձ շահի բոլոր մասնակիցների համար, թույլ է տալիս ստեղծել սոցիալական ենթակառուցվածքներ (սոցիալական կապերը մարդկանց միջև, համագործակցություն ՏԻՄ-ի հետ, համերաշխություն, փոխվստահություն, փոխադարձ հարգանք), ձևավորել բնակիչների մոտ կոոպերացիոն հմտություններ, նախաձեռնողականություն, կոլեկտիվ գործողությունների իրականացում: Նման համատեղ գործունեությունը թույլ է տալիս մարդկանց մոտ պատկերացում ձևավորել իրենց շահերի, իրենց և ՏԻՄ-ի շահերի ընդհանրությունների մասին, ինչպես նաև կոլեկտիվ գործողության կիրառման արդյունավետությունն ընդհանուր շահերի ձեռքբերման համար:

Կար ժամանակ, երբ բնակիչները զրկված էին սեփական շահերը պաշտպանելու կամ առաջադրելու իրավունքից, այսինքն պետական պաշտոնյաները, այսպես ասած, լուծում էին բնակիչների խնդիրները, սակայն դա արվում էր ոչ անմիջական շփման միջոցով: Իհարկե պետք չէ անտեսել այն փաստը, որ կարևոր կառավարչական որոշումների ընդունման պատասխանատվությունը ծանր հոգևոր բեռ է, որն առավել ցայտուն արտահայտվում է կառավարման ամենավերին մակարդակում: Սակայն ցանկացած մակարդակի կառավարիչ գործ ունի ուրիշների սեփականության հետ և դրա միջոցով ազդեցություն է ունենում նրանց կյանքի վրա: Կառավարման գործընթացում որոշումների ընդունումն ավելի կառուցվածքային

գործընթաց է: Այստեղ ռիսկի գործոնը շատ դեպքերում անհամեմատ ավելի մեծ է: Ամեն անհատի որոշում վերաբերվում է առաջին հերթին իրեն և հենց ինքն էլ իր վրա է զգում դրա հետևանքները, իսկ կառավարիչն ընտրում է գործունեության ուղղությունը ոչ միայն իր, այլ նաև այս դեպքում տվյալ համայնքի և նրա բնակիչների խնդիրների լուծման համար:

Արդի կառավարչական պարադիզմը ենթադրում է, որ արդյունավետ կառավարման համակարգերն իրենց զարգացման ընթացքում պետք է հիմնվեն գիտական կանխատեսման վրա: Հայտնի է, որ տարբեր համակարգերի, այդ թվում նաև մարդկային գործունեության արդյունավետ կառավարումը հնարավոր չէ առանց նպատակին հասնելու խոչընդոտների և հետևանքների կանխատեսման:

Ուստի շատ կարևոր է, որ համայնքային կյանքի ղեկավարումն ստանձնած պաշտոնյաներն իրազեկված լինեն բնակիչների մտահոգող հարցերի և խնդիրների մասին և փորձեն նրանց ներգրավվմամբ՝ բանկացությունների և համագործակցության միջոցով, ինչպես նաև նրանց ընդգրկելով որոշումների կայացման գործընթացին, առավել բարելավել համայնքային կյանքը:

ՀՀ-ում համայնքային բնակիչների մասնակցությունը տեղական ինքանակառավարմանը

Հայաստանի Հանրապետությունում համայնքները ղեկավարվում են ՏԻՄ-ի կողմից: Համաձայն «ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի, 3-րդ հոդվածի՝ տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ գործող տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի սեփականությունը տնօրինելու և համայնքային նշանակության հարցերը լուծելու իրավունքն ու կարողությունն է:

Տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվում են համայնքի անդամների կողմից: Տեղական ինքնակառավարման մարմիններն են՝ համայնքի ղեկավարը, ավագանին և այլ աշխատակիցներ: Համայնքի անդամ է համարվում Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը մշտապես բնակվում է տվյալ համայնքում կամ վերջին երեք տարում անընդմեջ ընդգրկված է համայնքում հարկեր, տեղական տուրքեր և վճարներ կատարողների ցուցակում: Այստեղից հետևում է, որ համայնքային կյանքի բարելավման, դրանում իրականացվող բարեփոխումները, առաջացած խնդիրների լուծումն իրականացվում է ՏԻՄ մարմինների կողմից:

Այժմ փորձենք հասկանալ, թե ինչպես են ներգրավված բնակիչները համայնքային խնդիրների լուծման և որոշումների իրականացման գործընթացին, որոնք են այդ մասնակցության ձևերը և այլն: Ինչպես նաև դուրս բերենք այս հարցերի լուծման մեթոդներ:

Համայնքային կյանքի արդյունավետ կառավարման համար, պաշտոնյաներն, ովքեր ստանձնել են համայնքի ղեկավարման առաքելությունը իրենց առջև ունեն խնդիր՝ ապահովել համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների, ոչ ֆորմալ խմբերի լիարժեք և ժամանակին մասնակցությունն ու ներգործությունը համայնքային քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացներում՝ երաշխավորելով հանրային տեղեկատվության լիակատար թափանցիկությունն ու մատչելիությունը:

Այսպես առաջնահերթ խնդիրները հետևյալն են՝

1. համայնքում հիմնել և կիրառել բնակիչների մասնակցության գործուն կառուցակարգեր, ընթացակարգեր, գործընթացներ և ձևեր.
2. ձևավորել համայնքի կառավարման նոր, քաղաքացիամետ մոտեցումներ.
3. հստակեցնել համայնքի մասնակցային կառավարման համակարգում շահագրգիռ բոլոր կողմերի դերերը և պարտականությունները.
4. բնակիչների համար ստեղծել հնարավորություններ՝ ունենալու ակտիվ դեր համայնքի կառավարման և զարգացման գործում.
5. պայմաններ ստեղծել համայնքում առկա շահերի հավասարաչափ ներկայացումը և հավասարակշռումը որոշումների կայացման գործընթացում.
6. համայնքում ապահովել փոխվստահության մթնոլորտ:

Ինչպես արդեն նշվեց, համայնքների ղեկավարումն իրականացվում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից, ուստի բնակչության մասնակցության գործընթացում նրանք ունեն իրենց գործառույթները:

Համայնքի ղեկավարը ստեղծում է բավարար պայմաններ և հնարավորություններ բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և ոչ ֆորմալ խմբերի համար՝ լինելու իրազեկ ՏԻՄ-երի գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը: Օրինակ՝

- իրավական ակտերի նոր նախաձեռնությունների և նախագծերի քննարկումներ.
- համայնքի զարգացման ռազմավարությունների և ծրագրերի (տարեկան, քառամյա, երկարաժամկետ և հատուկ) մշակում, քննարկում, իրականացում և վերահսկում.
- համայնքի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների գործունեության, ներառյալ՝ դրանից ստացված արդյունքների և շահառուների վրա ազդեցության մոնիթորինգ և գնահատում.
- համայնքի բյուջեի կազմում, քննարկում, կատարում և վերահսկում.

- համայնքային ծառայությունների մատուցումը բարելավելու վերաբերյալ քննարկումներ և համայնքի ավագանու որոշումների նախագծերի կազմում և ներկայացում.
- տեղական հարկերի, տուրքերի, վճարների դրույքաչափերի, համայնքային ծառայությունների մատուցման դիմաց գանձվող վճարների չափերի, դրանց հավաքագրման առկա խնդիրների և քաղաքականության վերաբերյալ քննարկումներ.

Ինչպես նաև համայնքի ղեկավարն ապահովում է տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության միջոցառումների կազմակերպումը և անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում: Ստեղծում է համապատասխան պայմաններ և միջոցներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց, սակավաշարժ խմբերի, կարդալու և լսելու դժվարություններ ունեցող, տնային տնտեսուհիներին և սոցիալական այլ խմբերին պատկանող բնակիչների լիարժեք մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը: Նրա լիազորությունների մեջ է մտնում նաև ապահովել համայնքի բնակիչների համագործակցությանը համայնքի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ՝ նրանց իրազեկելու և կրթելու՝ համայնքում տեղական ինքնակառավարման և ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ նրանց գիտելիքները հարստացնելու և հմտությունները զարգացնելու նպատակով:

Ինչպես արդեն նշեցինք վերևում, այսօր համայնքի մասնակցային կառավարման գործընթացի անբաժանելի մաս են կազմում համայնքի բնակիչները:

Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանն ընթանում է հետրյալ սկզբունքներով՝

- մատչելիություն.
- վստահություն.
- թափանցիկություն.
- հրապարակայնություն.
- ակտիվություն.
- օպերատիվություն և արագ արձագանքում.
- արդյունավետություն.
- պատասխանատվություն և հաշվետվողականություն:

Բնակիչներն իրավունք ունեն մասնակցելու կառավարման հետևյալ գործընթացներին՝

1) մասնակցություն ՏԻՄ-երի կողմից կազմակերպվող և անցկացվող հանրային քննարկումներին, հանդիպումներին, ժողովներին, հավաքներին, հարցումներին, հանրային միջոցառումներին և բնակիչների մասնակցության այլ ձևերին.

2) ներգրավվածություն տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում խորհրդակցական (խորհրդատվական) մարմինների, հանձնաժողովների, խորհուրդների, ֆոկուս խմբերի, ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի ձևավորմանը և գործունեությանը.

3) հանրային շահերի պաշտպանություն.

4) համատեղ աշխատանք.

5) փորձագիտական աշխատանք.

6) հետադարձ կապ համայնքային ծառայությունների մատուցման որակի և մատչելիության բարելավման աշխատանքներում:

Յուրաքանչյուր մարդու համար շատ կարևոր է զգալ սեփական ուժերի և կարողությունների նկատմամբ վստահություն, ինչպես նաև իր խոսքի կարևորության և այն լսելի դարձնելու անհրաժեշտություն: Այսպիսով, բնակիչների մոտիվացման և նրանց՝ համայնքային կյանքի առավել ակտիվ ներգրավածության համար համայնքի ավագանին կարող է սահմանել խրախուսական մրցանակ առավել ակտիվ բնակիչների համար:

Բնակիչների տեղական ինքնակառավարման մեջ ներգրավման և որոշումների ընդունման մասնակցության միջոցները, ձևերը և դրանց կիրառման նպատակները

Տեղական ինքնակառավարմանը բնակիչները կարող են մասնակցել երկու եղանակով՝ պասիվ և ակտիվ: Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության պասիվ ձևերից են բնակիչների ծանուցումը, իրազեկումը և (կամ) կրթումը: ՏԻՄ-երի կողմից տեղական ինքնակառավարմանը բնակիչներին ծանուցումը և իրազեկումը կարգավորվում է «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, այլ ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով: Իսկ ակտիվ ձևերից կարող են լինել բնակիչների ներգրավումը համայնքի կառավարման և զարգացման, ՏԻՄ-երի որոշումների կայացման գործընթացներում՝ հնարավորություն տալով բնակիչներին ներազդելու դրանց վրա, բնակիչներից կարծիքի հարցումը և բնակիչներից տեղեկատվության հավաքագրումը:

Մասնակցության առաջին ձևերն են՝ տեղեկացման (իրազեկման) և կրթության ձևերը: Այս ձևերն օգտագործելիս բնակիչների կարծիքներն ու գաղափարներն իմանալու անհրաժեշտություն չի զգացվում, հետևաբար դրանց օգտագործման հատուկ կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու անհրաժեշտություն չի առաջանում: Բնակիչների տեղեկացման և կրթության ձևերի թվին են դասվում հանրային տեղեկատվությունը, այդ թվում՝

- հայտարարությունները տեղական զանգվածային լրատվության միջոցներով (ԶԼՄ-ներ),

- տեղեկատվություն ՏԻՄ-երի կողմից համայնքի տարածքում ծրագրվող տարբեր միջոցառումների մասին,
- համայնքի ավագանու նիստերի ուղիղ հեռարձակումը, ինչպես նաև դրանց տեսագրության ցուցադրումը բնակիչներին,
- ռադիոհեռուստատեսային ծրագրերի հեռարձակումը, որոնք ներկայացնում են ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ մեկնաբանություններ և վերլուծություններ, տեղական տպագիր և էլեկտրոնային մամուլը.
- հանրային զեկույցները և հաշվետվությունները.
- տեղեկատվական կենտրոնները, «մեկ պատուհանի» սկզբունքով ընդունարանները. կրթական (ուսուցման, վերապատրաստման և այլ) ծրագրերը.
- ընդունելությունները և «բաց դռների» ծրագրերը և այլն:

Մասնակցության հաջորդ առաջարկվող ձևերն են՝ բնակիչների ներգրավումը և ներգործությունը: Դրանք կարող են իրականացվել հետևյալ միջոցառումների անցկացման միջոցով.

- հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումների կազմակերպում և անցկացում.

Կարող են կազմակերպվել համայնքի համար առավել կարևորություն ունեցող հարցերի և իրավական ակտերի նախագծերի (գլխավոր հատակագիծ, գոտիավորման և հողօգտագործման սխեմաներ, զարգացման ռազմավարություններ, ծրագրեր՝ (բյուջեներ և այլն) պաշտոնական մթնոլորտում (ֆորմալ

եղանակով) քննարկման նպատակով:

- Հանրային ժողովներ և շահագրգիռ անձանց հետ հանդիպումների կազմակերպում.

Այս հանդիպումները կարող են կազմակերպվել համայնքային որևէ հարցի կամ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրային կամ մասնակիցների կանխորոշված շրջանակի տեսակետների և կարծիքների արտահայտման համար հնարավորություն ստեղծելու նպատակով: Դրանց կազմակերպումն ու անցկացումը ոչ պաշտոնական մթնոլորտում է (ոչ ֆորմալ եղանակով):

- Հարցումների կազմակերպում և անցկացում.

Հարցումների նպատակն է համայնքային որևէ հարցի կամ իրավական ակտի նախագծի վերաբերյալ բնակիչների կարծիքներ և տեսակետներ պարզելը: Հարցումներին կարող են ներգրավվել համայնքի բնակիչները կամ նրանց որոշակի խմբերը:

- Ֆոկուս խմբերի ձևավորում.

Ֆոկուս խումբը կարող է ձևավորվել ՏԻՄ-երի որևէ նախագծի կամ նախաձեռնության նկատմամբ համայնքի բնակիչների «լուռ մեծամասնության» վերաբերմունքը պարզելու և մոտավոր գնահատելու նպատակով: Ֆոկուս խմբի անդամները կարող են ներկայացնել համայնքը կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրը կամ թաղամասը՝ որպես տարբեր տեսակետներ կրողներ: Ֆոկուս խմբի ներկայացուցչի կամ խորհրդատուի զեկույցը ՏԻՄ-երի համար կարող է հիմք հանդիսանալ համայնքային որոշակի քաղաքականության մշակման, ընդունման և իրագործման համար:

- Համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի ձևավորում.

Համայնքային ֆորմալ (իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հասարակական կազմակերպություններ, միություններ, միավորումներ, հիմնադրամներ և այլն) և ոչ ֆորմալ խմբերը (իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող քաղաքացիական, նախաձեռնող, ակտիվ խմբեր և այլն) կարող են ստեղծվել համայնքում առկա խնդիրների լուծման, ուղիների որոնման, քննարկման և գաղափարների փոխանակման, բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանության և այլ նպատակներով: Համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերն ստեղծվում և հանդես են գալիս հատկապես համայնքային ծրագրերի մշակման ու կառավարման, համայնքային ծառայությունների մատուցման գործընթացներում բնակչության մասնակցությունն ապահովելու և բնակիչների խնդիրները ՏԻՄ-երին հասանելի դարձնելու նպատակով:

- Տեղական զանգվածային լրատվության միջոցների կիրառում.

Բնակիչները կարող են տեղական ԶԼՄ-ներում ահազանգերի, հաղորդագրությունների, հայտարարությունների, հոդվածների, ելույթների և այլ ձևերով ներկայացնել համայնքի այս կամ այն խնդրի վերաբերյալ իրենց դիրքորոշումը, մտագոհությունները, տեսակետներն ու առաջարկությունները, որոնք ուղղված են ամբողջ համայնքին, այդ թվում՝ տեղական իշխանություններին:

- Էլեկտրոնային և համացանցային միջոցների կիրառում.

Մեր օրերում էլեկտրոնային և համացանցային միջոցները կարելի է ասել ամենաարդյունավետ միջոցներից են՝ արագ ինֆորմացիա տարածելու, կապ հաստատելու համար: Ինչպես գիտենք, ՏԻՄ-երի կողմից իրականացվող տարբեր ծրագրերի, նախագծերի, միջոցառումների և նմանատիպ

այլ գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածումն իրականացվում է ՏԻՄ-երի պաշտոնական համացանցային կայքի, տարբեր համացանցային սոցիալական հարթակներում, ՏԻՄ-երի կողմից ստեղծված խմբերի և էջերի, ինչպես նաև համացանցային և էլեկտրոնային այլ միջոցներով: Համայնքի պաշտոնական համացանցային կայքի, տարբեր համացանցային սոցիալական հարթակներում ՏԻՄ-երի կողմից ստեղծված համացանցային խմբերի և էջերի առկայության դեպքում, համայնքի աշխատակազմը կարող է առցանց /online/ ռեժիմով պատասխանել բնակիչներին հուզող հարցերին, իրականացնել հարցումներ, համայնքային բաց լսումներ կամ քննարկումներ և բնակիչների մասնակցության այլ ձևեր:

Ամփոփելով վերը նշվածը, կարող ենք դուրս բերել բնակիչների մասնակցության ձևերի կիրառմանան նպատակները՝

1. տեղեկացնել բնակիչներին ՏԻՄ-երի գործունեության մասին, որպեսզի նրանք մասնակցեն ՏԻՄ-երի որոշումների կայացման գործընթացներին և/կամ իրազեկ լինեն համայնքի կառավարման և զարգացման գործընթացներին.
2. կրթել բնակիչներին, որպեսզի նրանք ավելի խելամտորեն վերաբերվեն ՏԻՄ-երի նախաձեռնություններին և կարողանան գնահատել համայնքային խնդիրների լուծման այլընտրանքային առավելություններն ու թերությունները.
3. հայցել տեղեկատվություն բնակիչներից, որպեսզի ընդլայնվի ՏԻՄ-երի տեղեկատվության աղբյուրների շրջանակը.
4. խորհրդակցել բնակիչների հետ, որպեսզի պարզվի նրանց կարծիքը ՏԻՄ-երի նոր նախաձեռնությունների վերաբերյալ.
5. ներգրավել բնակիչներին համայնքի պլանավորման և բյուջետավարման գործընթացներում՝ նրանց մասնակցությունը համայնքի ապագա տեսլականների, ռազմավարությունների, ծրագրերի և բյուջեների մշակմանը ապահովելու նպատակով.
6. ապահովել հետադարձ կապ բնակիչների հետ, որպեսզի պարզվի ՏԻՄ-երի նախաձեռնությունների սոցիալական ազդեցությունը բնակիչների վրա և ճշտվեն ՏԻՄ-երի հետագա գործողությունները.

7. ներգրավել բնակիչներին ՏԻՄ-երի որոշումների կայացման գործընթացում՝ ապահովելով նրանց ուղղակի մասնակցությունը տարբեր խորհրդակցական մարմիններում, հանձնաժողովներում, աշխատանքային խմբերում և այլն:

Համագործակցության կարևորությունը և մարդկանց ներգրավումը համատեղ որոշումներ կայացնելու գործընթացում կայանում է նրանում, որ դրա արդյունքում քաղաքացին, համայնքային բնակիչը հավատ է զգում սեփական հնարավորությունների և գործող իշխանության հանդեպ: Եվ հենց սա էլ հանգեցնում է համայնքային կյանքի բարելավմանը, ցանկություն է առաջացնում ինչ-որ լավ, գեղեցիկ, հետաքրքիր, միասնական գործունեություն ծավալել, հնարավորություն է տալիս փոխել շրջապատող աշխարհը դեպի լավը: Ինչպես նաև տեղական համայնքի և ՏԻՄ-ի համատեղ գործունեությունը մեծ կարևորություն ունի և նպաստում է համայնքային կյանքի տնտեսական ու սոցիալական միջավայրին և դրա մեջ մտնող մարդկանց կյանքի որակի բարելավմանը:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP)